ՊԳ18-ԳՀԾՁԲ-ԾԱ/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

ք.Երևան 30.03.2018թ.
ժամը 15-00-ին

Ս/թ մարտի 30ին տեղի ունեցավ < Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն> պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրենի 2018 թվականի մարտի 06-ի թիվ 87 հրամանով ստեղծված գնահատող հանձնաժողովի նիստը

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ -
Պետական գույքի հաշվառման բաժնի պետ Ռ.Վաթինյան
Անդամներ՝
Իրավախորհրդատու՝ Ա.Հայրապետյան
Պետական գույքի գնահատման բաժնի պետ Հ.Հարությունյան
Պետական գույքի գույքագրման բաժնի պետ Մ.Աբրահամյան
Ցանցային ադմինիստրատոր՝ Տ.Աբրահամյան
Հանձնաժողովի քարտուղար, գնումների պատասխանատու- Ա.Միրումյան
Գնումների կազմակերպման խմբի ղեկավար

ՕՐԱԿԱՐԳ

***<u>ՊԳ18-ԳՀԾՁԲ-ԾԱ/1</u> <u>ծածկագրով մրցույթի հայտ ներկայացրած և առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ֆինանսական միջոցներ և մասնագիտական փորձառություն չափանիշների գնահատում</u>***

ՊԳ18-ԳՀԾՁԲ-ԾԱ/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում 1ին չափաբաժնում առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչված < Բեսթ Սոֆթ> ՓԲԸ- վերաբերյալ 2018թ. Մարտի 23-ին Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ , ինչպես նաև «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին, էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը էլեկտրոնային փոստի միջոցով 2018թ. մարտի 23ին ծանուցվել է, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. ***Բեսթ Սոֆթ ՓԲԸ-ն, որպես 1ին տեղը զբաղեցրած մասնակից հրավերով սահմանված ժամկետում (26 մարտի 2018թ)ներկայացրել է որակավորումը հիմնավորող հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես***

**նախկինում կատարած 3 պայմանագրերի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրերի կողմերի հաստատած՝ պայմանագրի կատարումը հավաստող ակտերի (հանձման-սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի (հանձման-ընդունման արձանագրություններ) պատճենները և տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:**

2. **Առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:**

3. **2018թ. Մարտի 28-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ ՏՏ վարչության Տեղեկատվության փոխանակման և կառավարման բաժնի պետ Աշխեն Պապոյանից ստացված եզրակացության համաձայն** (եզրակացությունը կցվում է) **< Բեսթ Սոֆթ > ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, իսկ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտը գերազանցում է հայտով ներկայացված գնային առաջարկը :**

Որոշում 3

1. Քանի որ ՊԳ18-ԳՀԾՁԲ-ԾԱ/1 ծածկագրով մրցույթի շրջանակներում 1ին չափաբաժնում առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչված < Բեսթ Սոֆթ> ՓԲԸ-ն չունի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտը գերազանցում է հայտով ներկայացված գնային առաջարկը և որպես 1ին տեղը գրաված մասնակից իրավերով սահմանված ժամկետներում և կարգով ներկայացրել է որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, ուստի ՊԳ18-ԳՀԾՁԲ-ԾԱ/1 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 1ին չափաբաժնում առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչված < Բեսթ Սոֆթ> ՓԲԸ-ն հայտարարվում է ընտրված մասնակից:

2. Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը անգործության ժամկետ կիրառելի չէ:

3 .Ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջը:

4. **Պետական գույքի հաշվառման նոր ավտոմատացված ու ամբողջական (ներառյալ՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման ոլորտում ՀՀ կառավարության լիազոր մարմնի՝ARPIS համակարգի հետ համակցումը) համակարգի մշակման ու ներդրման ծառայությունների ձեռք բերման**

*նպատակով ՊԳ18-ԳՀԾՁԲ-ԾԱ/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել գnumner.am կայքում:*

*Ընդունվել է որոշում Կողմ 5, Դեմ 0:*

***Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները***

*Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները*

*Հանձնաժողովի նախագահ -*
*Պետական գույքի հաշվառման բաժնի պետ* — *Ռ.Վաթինյան*
*Անդամներ՝*
*Իրավախորհրդատու՝* — *Ա.Հայրապետյան*
*Պետական գույքի գնահատման բաժնի պետ* — *Հ.Հարությունյան*
*Պետական գույքի գույքագրման բաժնի պետ* — *Մ.Աբրահամյան*
*Ցանցային ադմինիստրատոր՝* — *Տ.Աբրահամյան*
*Հանձնաժողովի քարտուղար, գնումների պատասխանատու -*
*Գնումների կազմակերպման խմբի ղեկավար* — *Ա.Միրումյան*

*Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա պայմանագրերի կնքման հաջորդ օրը:*